

պէսպէս կամայական շքեղ կոչմանց՝ էր *Սուրբ Թագաւոր*. կոչումն հնչեալ ստեպ եւ յունկն օտարաց, զոր եւ ՚ի պատմութեան իւրեանց՝ ըստ լրոյ ականջաց իւրեանց (Վիլլեպրանտ՝ յՈւղեւորութեանն, Ժոէնվիլ ՚ի վարս Ս. Լուդվիկի) *Սուր Թագվոլ* գրեն: Ուղղակի գրուած ինչ ՚ի մերայոցս առ Լեւոն չէ հասեալ առ մեզ, բաց ՚ի թղթոյ Լամբրունեցոյն՝ որ յառաջ քան զհանդիսապէս թագաւորել նորա գրեալ է, որպէս եւ ոչ առ այլ թագաւորս. այլ որչափ ինչ նշանակի՝ սովորական կոչումն է նոյնպէս *Սուրբ, Բարեպաշտ, Աստուածագօր, Աստուածասէր, Յաղթող*. ընդ սոցին եւ այլ այսպիսեաց՝ *երկրպագութիւն* եւս հաւանօրէն դաւանիւր. որոյ հաւաստիս ընծայէ պատառիկ մի՝ վերնագիր թղթոյ գրելոյ յամի 1310, յայտ է թէ առ Օշին թագաւոր, այսպէս. «Աստուածային զօրօք զօրացեալ եւ կամօք նորին բարձրացեալ, քրիստոսապսակ արքայ ամենայն Հայոց. հողոյ հաւասար ծառայքս ՚ի *Գրիգոր Դոնպնոն* ու *Գրիգոր երէց* որ... ու *զգլուխս ՚ի գետին դնենք* եւ *երկրպագութեամբ* յիշեցնենք ձեր սուրբ Թագվորութեանը»: Յայտ է թէ ըստ վիճակի եւ աստիճանի գրողացն՝ զանազանէին եւ մակդիրքն: Յօտարաց՝ սովորական ընծայեալ վերանուն էր *Illustris*, (Պայծառափայլ ըստ մեր ոճոյ), *Serenitas* կամ *Magnificentia*, որպէս գրի ՚ի թուղթս Իննովկենտեայ Գ առ մերս Լեւոն<sup>109</sup>:

Այսպիսի պատուոյ անուանք՝ գրեալք ՚ի թագաւորաց մերոց եւ վերագրեալք առ թագաւորս մեր, հնչէին եւ ՚ի տաճարս ամենաթագաւորին Աստուծոյ, ՚ի ժամ մեծի խորհրդոյ պատարագին, ՚ի կարգի գոհաբանական յիշատակացն, որպէս ընթեռնումք ՚ի Պատարագամատոյցս գրեալս յաւուրս պայազատութեան նոցին. զոր օրինակ. «Եւ վասն զօրութեան եւ յաղթութեան ՚ի Քրիստոս Աստուած հաւատարիմ թագաւորին մերոյ Ա. Ա. եւ ամենայն թագաւորաց քրիստոնէից...: Եւս առաւել վասն հանգուցեալ թագաւորացն մերոց, *Հեթմոյ* եւ *Լեւոնեանցն*, եւ թագուհեացն նոցին՝ *Չապելի* եւ *Կեռանի*, եւ արեամբ նահատակացն՝ *Թորոսեանց*, եւ *Պարոնին Կոստանդեայ*, եւ որդւոց իւրոց եւ նախնեաց նոցին *Ռորինեանց*. Ազատութիւն եղբարց մերոց», եւ այլն:

<sup>109</sup> Ի պատճէնս կամ ՚ի հաւաքման վերնագրաց ՚ի ձեռագիրս ուրեք, առ թագաւորն այսպէս ընծայի. «Ի հիմանց հնոց եւ ՚ի նախնեաց բարեաց՝ ընձիւղեալ շառաւեղ բարի, տնկեալ ՚ի տան Տեառն եւ ՚ի գաւիթս Աստուծոյ, հանդիսական հաւաքմամբ ՚ի կողմանէ վեհին նախակարգեալ ՚ի թագաւորական պատիւ ճոխութեան, բարեպաշտ եւ աստուածասէր թագաւոր»: